



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հայրազանի Է.
Պարսկաստանի կամ
Հայրիկ կրկնու նշանակա-
րանք:

ԼԵՆ

✓764

ՊԱՏՈՒՄՏՄԱՆ

ԿԱՍ

ԾԱՂԻԿ ԿՏՐԵԼՈՒՅՆ ՆՇԱ-
ՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

ՔՐԻՍՏՈՍ ԳԵՐՄԱՆՅԱՅԻ ԹԺ. ՀԵՆՐԻ-
ԿՈՍ ԲՕՀԻՒ ԳԵՐՄԻԷ:

ՀԱՆԳԵՐՉ ՅԱԻԵԼՈՒԱԾՈՎ:

ԱԾԽԱՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԻԱՆԻ ԼԱԼԱՅԱՆՑ

657

1872

ԹԻՖԼԻՉ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՀԱՄԱՐՏՈՒՄԱՅ ԲՆՅՈՒՃԱՆՑ ԵՒ ԸՆԿ

Ltn
763

1999 7 14

ԻԻՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

459



ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒՄ

ՅԱՌԱՋԱԲԱՆ:

Մենք չունինք պատմական իրողութիւններ այն մասին, թէ նրբ են մտել մեր աշխարհը ծաղկելու և պատուաստումը: Ծաղկելու անտարակոյս շատ հին ժամանակից, որովհետև մեր հին մատենագիրքերի մէջ դանում ենք նորա մասին յիշատակութիւն: Հաւանական է կարծել, որ պատուաստումը ևս դեռ եւրոպա չը մտած յայտնի է և ղել մեզանում: *)

Թէև վաղուց յայտնի լինէր այդ մեր ժողովրդեանը, բայց մենք չենք կարող ուրանալ այն, որ սա ստուռ է նայում նորա վերայ: Յաւելով պէտք է խոստովանել, որ շատ անդամ ծնողները պատուաստում են իւրեանց որդւոցը այն պատճառով միայն, որ նպատակ ունէին նոցա մի որ և իցէ արքունի ուսումնարան ուղարկել, ուստի և կարծում եմ, որ աւերորդ չի լինիլ իմ այս զրբոյիլը, որ պէտք է ցոյց սայ պատուաստման արժանաւորութիւնը: Ես առել եմ այն մի համանուն դերմանական զրբից, բայց թողնելով այն սեղերը, որոնք վերաբերում են միմիայն

*) Մենք հաստատ ազգիւրից անդեկանում ենք, որ Գերջան գաւառում հարիւրաւոր տարիներ առաջ կատարումէր այդ ժողովուրդը, առնելով կովի թարմ ծաղկահիւթը և դնելով ոտների ու ձեռների ասեղով ծակած սեղերի վերայ: Նրեի ժողովուրդը այդ ծանօթութանը հասել է իւր սեփական սիրտով:

Дозволено Цензурою 17 Июня 1872 года г. Тифлинь.


4 763-ա
764

29. 765

գերմանական հասարակութեանը և աւելացնելով ուրիշ տեղերից քանի մի կարևոր տեղեկութիւններ: Վերջումը կայ մի յաւելում, պատուաստման կատարելու մասին: Այդ քաղած է գլխաւորապէս Ռուսաց ПУКОВОДСТВО КЪ ОСНОВНЫМЪ ВѢДѢНІЮ անունով զրբ'ց: Գործնով իւրաքանչիւր մարդ կարող է ինքը պատուաստել իւր որդուն, եթէ կամենայ:

Մարդկութիւնը շատ թշնամի ուժեր հնազանդեցրել է իւր կամքին և մինչև անգամ օգուտ է քաղել նոցանից: Բայց ահա մի թշնամի ոյժ ևս, մի հանրացաւ, որ անցայտ ժամանակներից ծագելով չէ դադարում սպառել մարդկութիւնը: Բայց գտած է հնարը և սորա դէմ, հարկաւոր է միայն օգուտ քաղել նորանից, գործ դնել նորան:

Ն. Լ. Կարգաւորում:



ՊԱՏՈՒԱՍՏՄԱՆ

կամ

ԾԱՂԻԿ ԿՏՐԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Քաղած Գերմանացի բժ. Հենրիկոս Բօհնի գործից:



Պատուաստման նշանակութիւնը և արժանաւորութիւնը չեն կարող պարզ հասկացուիլ, եթէ մարդ լաւ չէ ճանաչում այն չար թշնամին, որ նա ոչնչացնում է: Առանց իմանալու, թէ ինչ դեր է խաղում ծաղկը աշխարհիս երեսին, անկարելի է մի ուղիղ ենթադրութիւն անել այն պաշտպանողական հնարի մասին, որ դորա դէմ հնարուած է և գործ է դրվում: Ուրեմն կարելի է այս առիթ համառօտ ծաղկի պատմութիւնն անել:

Պատմութիւնը չէ որոշում, արդեօք Աֆրիկան է եղել ծաղկի հայրենիքը, թէ Ասիան: Առաջինի համար կարծում են այն պատճառով, որ այստեղ նա պատահում է ամենից աւել յաճախ և վտանգաւոր կերպով, իսկ երկրորդի համար այն պատճառով, որ այստեղ գտնվում են ամենահին յիշատակութիւնները ծաղկի մասին: Չինաստանում, օրինակի համար, գտել են մի գիրք, որ վերաբերում է ծաղկին, և շարադրած է մօտ 12 դար Քրիստոսի ծննդից առաջ: Միայն թէ ծաղկի ծագումը Ներուպայում

չէ եղած, այդ կասկածի տակ չէ: Նոյնպէս դժուար է որոշել, թէ ինչ ճանապարհով է նա Եւրոպա մտել, արդեօք Իսպանիայով Արաբացւոց միջնորդութեամբ, թէ Հռոմայեցւոց արշաւանքով առաջին անգամ Կոստանա է բերուել: Բայց այս հաստատ է, որ նա Եւրոպ դարում մեր տարեթուով հարաւային Եւրոպայում բաւական տարածուած էր: Պատերազմական յարաբերութիւնները, որոնք այն դարերում մտնեցրին միմեանց հեռաւոր և մերձակայ ազգերը, օգնեցին այդ տարափոխիկ ցաւի տարածմանը: Ամենից առաջ խաչակրաց արշաւանքները նպաստեցին իսկապէս այդ ցաւի արմատանալուն այն երկիրներում, որոնք մինչև այժմ ազատ էին մնացել նորանից, և ծաղիկ ընկած տներով կարելի էր որոշել խաչակիրների ճանապարհը:

Այդպէս մենք տեսնում ենք, որ Ֆրանսիան, Անգլիան, Գանիան, Եվեդիան շուտով ծաղիկ ենթարկուած երկիրների կարգն են մտնում: Սկզբում ժամանակ առ ժամանակ, բայց յետոյ երկարատև: Գերմանիայ ծաղիկը պէտք է մտած լինի Նիդերլանդիայից 1463 թուին Մաքսիմիլիան ա. Կայսեր գերիներէ միջնորդութեամբ: Ծաղիկը Անգլիայից անցաւ Իսլանդիա և Ռուսաստանից տարածուեցաւ Սիբիրիա և մերձակայ երկիրները, և զարմանալին այն է, որ մինչդեռ այրեցնալ գօտու երկիրները ծաղիկ հայրենիքն են համարվում, բարձր հիւսիսը մի պողարեր հող դարձաւ նորա սարսափելի տեսակների համար:

Որքան այդ հիւանդութիւնը տարածվում էր, նոյնքան և աճում էր մի և նոյն ժամանակ նորա զօրութիւ-

նը, նորա տարափոխութիւնքը աւելի ընդհանուր, բազմաթիւ և մահաբեր էին դառնում: Շատ անգամ ամբողջ Եւրոպան մի ծայրից մինչև միւսը, հիւսիսից մինչև հարաւ, նորա հեռ և հիւսիսային Ասիան և հիւսիսային Աֆրիկան ծաղիկ ենթակայ են եղել: Նորա սահմանը դրվում էր միայն այնտեղ, ուր քաղաքակրթութիւնը և մարդոց մերձ յարաբերութիւնները միմեանց հեռ դեռ ևս մուտ չեն գործել:

Արևմտեան կիսագնտում, Ամերիկայում, ծաղիկը տարածուեցաւ նորա գիւտից տասն ու հինգ տարի յետոյ Իսպանացւոց միջնորդութեամբ և բնիկներին աւելի մեծ աւերածութիւններ պատճառեց, քան թէ Եւրոպացւոց սուրը, հրաղէնքը և օղին: Ամբողջ Հնդկական ցեղեր չքացան այդ հիւանդութեամբ. դորան թշուառ Հնդկացիքը համարում էին մի չար հոգի, որ եկած էր բոլոր կենդանի մարդիկը ոչնչացնելու: Սակայն այդ հանրացաւը բարձր նշանակութիւն ունեցաւ ամբողջ Ամերիկայի համար այն ժամանակ, երբ սկսուեցաւ Նեգրների գերեվարութիւնը առաւելապէս ծաղիկ ենթարկուած Աֆրիկայից, այնպէս որ Նեգրների իւրաքանչիւր տեղափոխութիւնը ծաղիկ տարածման պատճառ էր լինում: Շատ սարսափելի կերպով օգնեցին այդ ախտի տարածմանը անցեալ դարու սկզբում ծաղած սոզոմիջեան մերձ յարաբերութիւնները և աշխարհի առանձին մասների շաղկապուիլը ծովազնաց ազգերի միջնորդութեամբ:

Ծաղիկը, անտարակոյս, եղած է ամենածանր տանջանքը, որ մարդկային ազգը երբ և իցէ կրել է: Քե-

ախտ կարող է նորա հետ համեմատուիլ հասակով, որ
 դարերով է հաշվում, և ոչ մինը նոցանից չէ կարող նո-
 րան մօտենալ զոհերի թուով: Այսպէս, Եւրոպայում ան-
 ցեալ դարու ընթացքում ամէն տարի մօտ կէս միլիօն
 մարդ էր մեռնում ծաղկից, հինգ հիւանդացածից մինը,
 ծանր ծաղիկների ժամանակ երկուսից և երեքից մինը—Բեր-
 լինում ամէն տարի բնօկիչների տասն կամ տասներկու-
 երրորդ մասը: 1796 թուին այն ժամանակուայ փոքրիկ Պը-
 րուսիայում մեռաւ 25,000 հոգի. գերմանիայում ամէն
 տարի 70,000. Շվեդիայում 30 տարուայ մէջ (1774—
 1803) մօտ 130,000 մարդ: Ֆրանսիայում ծաղկատարնե-
 րի թիւը կազմում էր 60—70 պրոց. բոլոր մեռնողներին:
 1707 թուին Իսլանդիան իւր եղած չեղած 50,000 հոգուց
 20,000-ը կորցրեց ծաղկով: Սիբիրիան մասամբ նորա պատճա-
 ռով այլ երկիր դարձաւ: Ծաղիկի մոնստրուց առաջ նորա ժողո-
 վուրդը ամենայն տեղ առաւել բազմաթիւ էր և զանա-
 զան տեսակ, բայց յետոյ շատ ազդեր չքացան կամ ծաղ-
 կի երկիւղեց հեռացան զանազան տեղեր: Կտրելի է ընդ-
 հանրապէս ընդունել, որ 1800 թուից առաջ ծաղիկը
 բոլոր երկրներում մարդոց մի տասներորդը սղանեց և
 մի տասներորդը կուրութեամբ և այլ անբժշկելի ցաւե-
 րով խեղացրեց:

Այս սարսափելի իրողութիւնը պարզ երևում է
 այն ժամանակի ամենայն նշանաւոր բժիշկների խօսքերի,
 ինչպէս նաև զանազան ժողովրդական գեղեցիկ զրուցուած
 ների մէջ:

Անգլիական չիպսոկրատը, Սիդենհամը, ծաղիկը ան-

ուանում է ամենալատ հիւանդութիւնը, որ աւելի շատ
 զոհ է պահանջում, քան թէ վառօդը: Միւսները ուղղակի
 համարում են նորան մի անփախուստ ժանտախտ: Հոչա-
 կուած գերմանացի բժիշկ Պետրոս Ֆրանկը անցեալ դա-
 րու սկզբում, ասում է, թէ ոչ ոք իւր մահից առաջ չէ
 երջանիկ և հաւատացած, թէ ով որ ծաղիկ չէ կրել, կա-
 րող է մի վաղահաս մահով նորանից ազատուիլ: Մի գեր-
 մանական առած ասում է. ծաղկից և սկրուց շատ սա-
 կաւ մարդ կարող է ազատ մնալ:

Այն միտքը, որ այսօր ևս բժիշկները խոստովանում են
 ամէն ծանր ծաղկահիւանդութեան ժամանակ, այսինքն
 թէ 'ի դուր է ամենայն ջանք և արհեստ մի անգամ
 սկսուած հիւանդութեան առաջը առնելու և նորա աւե-
 րիչ զօրութեանը մի ազդու սահման դնելու այդ նախ-
 նական միտքը շատ վաղուց և ինչպէս երևում է շատ
 զանազան ազդերի մէջ ստիպել է մի հնար որոնելու, որ
 կամ բոլորովին այդ հիւանդութեան առաջը առնեն, կամ,
 եթէ նա անփախուստ է, դոնեա նորա ամենալուսնագաւոր
 խայթերը ջարդեն:

Այն քաղաքակրթուած զինացուց ազգի համար
 յայտնի է, որ նոքա իւրեանց օրդոցը հագցնում էին
 ծաղիկի թարախով թրջած շապիկներ, կամ ծաղիկի փրշ-
 րանքով լցնում էին նոցա պնչերը: Մի այդպիսի գործո-
 դութիւն, այսինքն, պատահական ծաղկից ազատուելու
 համար առաջուց գիտութեամբ ենթարկուել այդ հիւան-
 դութեանը, յայտնի էր շնդկաստանում, որոյ բժիշկները,
 բրամինները, գնում էին ծաղիկի թարախով թրջած բամ-

բակներ բազկի վերաւորուած տեղերի վերայ, կամ անց էին կայնում կաշուի միջով թունաւորած թերեր Այդ արհեստը հին ժամանակից առաւել ծաղկեցաւ Արաստանում և Չերքեզտանում, ուր օրիորդների գեղեցկութիւնը պահպանելու համար զանազան աւերորդապաշտ ծեսերով կատարում էին այդ պառաւ կանայքը: Հիւսիսային Աֆրիկայում և Եւրոպայում անգամ առաջին դարերում արդէն դանում են դորա հետքը: Անցեալ դարու սկզբում նա դադանի դործ էր դրվում գլխաւորապէս Յունաստանում և ընդհանրապէս կոստանդնուպոլսոյ յոյն բնակիչների մէջ: Գորան ասում էին ծաղիկը գնել և յիրաւի դորա հաւնար մի նշանաւոր գին էին ապխտ: Եւրոպայում այդ գործողութիւնը փոքր առ փոքր առաւել թեթեւացաւ և պարզուեցաւ: Առաջ ծաղիկը պահում էին առանձին անուշահոտ խղրի մէջ, քնում էին ծաղիկ հանողի մօտ և իւրեանց որդիքը նորա հետ մի անկողնում էին պառկեցնում: Ձեռոյ արդէն սկսան նշտրակներ և ասեղներ գործ գնել, որոնց միջնորդութեամբը, ինչպէս այժմ կովք ծաղկահին թը, նոյնպէս և այն ժամանակ ծաղկի փամփուշաների թարախը դնում էին մարմնու վերնամանչի տակ, — մի փորձ, որ արդէն պատմութեան մէջ յայտնի է անուամբս Բոն Եւրոպային ծաղկի պատմութիւն:

Մարդ հարցնում է զարմեցած, թէ ինչ գաղափար է հիմք դարձել այս զարմանալի գործողութեանը: Ինչպէս կարող էր մարդու միտքը գալ, գիտութեամբ ընդունել մի թոյն, որ ամենաչար ախտին էր պատկանում և ենթարկել իւր անձը այնպիսի հիւանդութեան, որից ազատուիլը

շատ հազուադիւս երջանկութիւն էր:

Այդ հակասութիւնը բացատրվում է հետեւեալ դիտողութեամբ: Բազմաթիւ դիտուածներով հաստատած է այս օրենքը, որ եթէ մարդ մի անգամ թէպէտ և թեթե ծաղիկ հանէ, այնուհետև նա ազատուած է նորանից: Նոյնպէս մի շատ փորձած իրողութիւն ևս ուսուցանում է, որ առանձին յայտնուող, կամ այնպէս անուանեալ անհատական [sporadisch] ծաղիկը առ հասարակ աւելի մեղմ և քիչ վտանգաւոր է լինում քան թէ վարակուածը: Այս երկու իրողութիւնը կազմում են բուն մարդկային ծաղկի պատուաստման հիմքը: Արդարեւ, մարդ ընդունելով անվտանգ անհատական ծաղիկը և դորանով մի և նոյն ժամանակ մի թեթե հիւանդութիւն յառաջ բերելով, կարող էր պաշտպանուած համարել իւր անձը այն վնասակար պատահական և վարակուող ծաղկից, որի առջև ոչ ոք ապահով չէր կարծում իւրեան: Փորձը ընդհանրապէս արդարացի է այդ հայեցուածքը:

Մի աիկին էր, որ Եւրոպայում պատուաստման ընդհանուր գործածութեան առաջին զարկը տուեց: Տիկին Մարի — Վօրթըն Մօնտաղը, կոստանդնուպոլսոյ Անդլիական դեսպանի կինը այստեղ անդեկութիւն ստանալով պատուաստման գործողութեան մասին Յոյների մէջ, 1718 թ. սիրտ արեց իւր երկու որդիքը և չորս տարիից յետոյ վերադառնալով Լօնդոն, իւր դստերքը ևս պատուաստել տալու բուն ծաղիկով: Այդ համարձակ գործը մեծ շարժողութեան մէջ ձղեց Լոնդոնը — իսկոյն որոշեցին, թողաւորի հրամանով, պատուաստումն փորձել Նիւդէթի և օ.

Թրն գէպ 'ի մահ դատապարտուած չարագործներն վերայ. այդ յաջողութիւն ունեցաւ, և չարագործները ազատուեցան ոչ միայն պատժից, այլ և այն վնասակար ծաղկից, որին երթարկեցին նրանց պատուաստելուց յետոյ: 1721 թուին Գեորգ ա. Թագաւորի որդիքը, ինչպէս նաև բազմաթիւ մանուկներ նոյն երկրի նշանաւոր տներից, պատուաստուեցան: Այդպէս ճանապարհ բացուեցաւ Եւրոպայի համար:

Նոր գիւտը արագութեամբ տարածուեցաւ Եւրոպայի ցամաքի վերայ և ովկիանոսի վերայով Հիւսիսային Ամերիկայ: Սրանսիական, Պրուսական, Սաքսոնական, Աւստրիական և այլ պալատները հետևեցին Անգլիականի օրինակին: Եկատերինա ա. Ռուսոց կայսրուհին, որ ազնուականներին օրինակ դառնալու համար իւրան և մեծ իշխան Պաւլին պատուաստել տուեց, նշանակեց ամէն մէկ Ռուսին, որ իւր որդուն կ'պատուաստէր, մի ռուբլի արծաթ: Մնացեալ երկիրներում այդպիսի դրամական օգնութեան հարկաւորութիւն չկար պատուաստման արմատանալու համար: 1746 թուին լոնդոնում հիմնուեցաւ մի հրապարակական ծաղկի պատուաստարան աղքատների համար և 1754 թուին նոյն տեղում բժիշկների ժողովը նոր գիւտին տուեց իւր կարևոր հաստատութիւնը:

Ոչինչ չէ կարող աւելի պարզ արտայայտել այն ծաղկի երկիւղը, որի մէջ գտնվում էր անցեալ դարը, քան թէ այն շտապողութիւնը, որով ամէն կողմից չնայելով պատուաստման բազմաթիւ բորբոքուած հակառակորդներին, գիտնում էին գէպ 'ի այդ կասկածելի զեղը:

Բայց շուտով արդէն անցաւ յաիշտակութիւնը նորա արժանաւորութեան մասին: Անտարակոյտ, պատուաստումն ընդհանրապէս արդարացնում էր նորա վերայ ունեցած ակնկալութիւնները և հազարաւոր մարդոց տուեց այն, ինչ որ նորանից սպասում էին: Սակայն աւելի յաճախ գործ դեներով ճանաչեցին և այդ դեղն վարսէլ-արու-նի-նը: Գիտութեամբ յառաջացրած հիւանդութիւնը միշտ չէր անցնիւնում այնպէս մեղմ, ինչպէս այն առաջին փորձերի ժամանակ. շատ անգամ պատուաստմանը հետևում էին ամենավատ ժանտախտը իւր բոլոր սարսափելի հետևանքներով և նոյն իսկ մահաբեր ծաղկիկը: Անգլիայում ութ տարի հաշվում էին մեռնողների երկու պրոցոն, պատուաստմանից: Նորա պատճառով թէպէտ բրժիշկները լաւացրին նորա եղանակը, բայց չկարողացան բարորոշին ջնջել նորա վատ հետևանքները:

Մի այլ թշուառութիւն, որ հետևում էր պատուաստմանը, բոլորովին կոտրեց նորա արդէն ընկած անունը: Թէպէտ ծաղկի վնասակար ոյժը փոքր ինչ նուազել էր, բայց նորա տարածման շրջանը օր ըստ օրէ աճում էր: Այդպէս, շատ երկիրներ, որոնք մինչև այժմ ազատ էին ծաղկից, այժմ ինքեանք ներս տարան նորան իբրև դեղ, պատուաստման միջնորդութեամբ: Միւս կողմից ակն յայտնի է, որ իւրաքանչիւր պատուաստեալին չէր կարելի բուրովին առանձնացնել, այնպէս որ նորանից միւսները կարող էին ծաղկի ստանալ, և այն ոչ թէ պատուաստմամբ այլ վարսէլամբ: Ուրեմն ծաղկաթոյնի աղբիւրները մէկի տեղ հազարներով էին արդէն:

Ի վերջոյ դժբաղդութիւնը այնպէս բացարձակ և բարձրագոյն եղաւ, որ ոչ միայն յարգելի բժիշկները ձայն էին բարձրացնում պատուաստման դէմ, այլ և սա՛ սկզբում փոքրիկ նահանգներում, իսկ 1763 թ. ամբողջ Ֆրանսիայում օրէնքով արգելուեցաւ: Բայց երկիւղը ծաղկից, որով Լուդովիկոս Ժե., մի զիւրացի աղջկանից վարակուելով, մեռաւ 1774 թ., այնպէս անխտիր տիրումէր, որ Լուդովիկոս Ժդ. չնայելով երկրի բոլոր արգելիչ կանոններին, իւրեան շատ և իշխանազունք զաղանի պատուաստել տուեց: Միայն կովի ծաղկահիւթի մեծ զիւտը ներկայ դարոյս սկզբում կարողացաւ բուն մարդկային ծաղկի պատուաստմանը մահաբեր հարուած տալ:

Մեր մի քանի ընտանի կենդանիների, այսինքն կովերի, ձիերի, ոչխարների և խոզերի մէջ ծաղիկը մի առանձին օտարտի ցաւ չէ, բայց նա սովորաբար անտես է լինում, որովհետեւ չէ յառաջացնում առանձին նշանաւոր երևոյթներ: Կովերի ծաղիկը լինումէ միայն ծծերի և պտուկների վերայ, բոլորովին նման մարդկային ծաղկին, թէև ակելի խոշոր ձևով: Յիշեալ մասների սովորականից աւելի տաքութիւնը և զիւրադրածութիւնը և ամենօրեայ կաթի քանակութեան մի փոքր նուազումն այդ կենդանուհիւանդութեան միակ արտայայտող նշաններն են, որոնք շատ անգամ և բոլորովին չեն լինում: Յաւը յաճախ բակտումէ իբրև անհատական երևոյթ, շատ սակաւ իբրև հանրացաւ և սովորաբար կով կիթոզի մասների միջնորդութեամբ տարափոխվումէ միեւնոյն ախտի կամ դաստակերտի միւս կովերին:

Ձիերի ծաղիկը ևս չունի մի ընդհանուր տարածութիւն, այլ երևումէ ոտների կապանքատեղերի վերայ իբրև ժահրոտ փամփուշտներ:*)

Համեմատ դիտողութիւնները և բազմաթիւ փորձերը ցոյց են տուել մերձ ազգակցութիւն կովի, ձիու և մարդու ծաղիկների մէջ, մերձ ազգակցութիւն, բայց ոչ նոյնութիւն: Նրեքի մէջ ևս նկատվում է միեւնոյն հիմնական ներգործութիւնը այն զանազանութեամբ միայն, որ առաջիններինը չափազանց մեղմ է լինում, մինչ մարդու ծաղիկը տարածվումէ ամբողջ մարմնի վերայ և շատ անգամ կորստաբեր սաստիկութիւն է ունենում: Ինչպէս որ մի անգամ ծաղիկ հանելով մարդ այլ ևս բոլոր կեանքի ընթացքում ընդունակ չէ լինում ծաղկաթոյնին, նոյնպէս և պատուաստումն կովի ծաղկից երկար տարիներով կորցնում է այդ ընդունակութիւնը: Մի այդպիսի պաշտպանողական ոյժ ունի և ձիու ծաղիկը, մինչ ոչխարի և խոզի ծաղիկները չունեն այդ յատկութիւնը:

Վովի ծաղիկ այդ պաշտպանողական ոյժը բուն մարդկային ծաղիկի դէմ երկար դարեր յայտնի է եղել զանազան երկիրների ժողովրդներին: Այդ յատկացումն արդէն շնորհացոց, և Ա. Ֆոն Հումբոլտը տեսել է այդ Մեքսիկայի լեռների հովիտների մէջ իբրև փորձած աւանդութիւն: Այդ ծանօթութեանը ժողովուրդը հասել է շատ անգամ կրկնած փորձով, պատճառ, որ այն անձինքը, որ

*) Ինչպէս երևում է սա պէտք է լինի այն, որ մեր զիւղութեամ կոչվում է սև ջուր:

բոնք կթել էին ծաղիկ հանած կովեր, սեղմել էին նոցա պտուկների վերայ կուտուած ծաղիկները և նոցա թարախով թրջուելով վարակուել էին, այսինքն ծաղիկ էին ստացել ձեռքերի և բազուկների վերայ (կամ այլ տեղ, ուր թարսիւր քսուել էր) — այդպիսի անձինքը այնուհետև տարածուող մարդկային ծաղկի վարակմանից ազատ էին մնում: Ֆրանսիայում դիտուեթեամբ անում էին այդ փորձը դիւղական քահանայքը և դիւղական ուսուցիչները: Այս վերջինքը իւրեանց շրջանակում կրթվում էին յաջողութեամբ կոյն ծաղկից մարդիկ պատուաստելով: Այդ գործարարական էր և Անդլիայի հովիւների մէջ:

Միայն այդ ճանապարհով, գիւղացւոց հաղորդած տեղեկութիւններով, բժիշկները ունեցան մի իրողութիւն որ փոքր առ փոքր տարածուելով քաղաքակրթութեան պատմութեան մէջ արժանաւորութիւն ստացաւ: Անդլիական բժիշկ Ջեննսերը առաջինը չէր, որ տեսնում էր այն պարզ ժողովրդական տեղեկութեան բոլոր արժանաւորութիւնը, բայց նորան մնում էր լրացնել այն դեղը, որի հետ յաւիտեան կապուած է նորա անունը: Էդուարդ Ջեննսերը ազգաւ Շոտլանդացի է և ծնուել է 1749 թ. Մայիսի 17-ին: Նա ուսանում էր դեղանոցում բժշկական արհեստի մէջ վարժուելու համար: Մի անգամ նա ընց այս տեղ մի դեղացի աղջկանից, թէ սա պաշտպանուած է ծաղկից, որովհետև արդէն վարակուել է կով կթելու ժամանակ: Այս պատմութիւնը առիթ տուեց նորան կովածաղկի պաշտպանողական ոյժը փորձով քննելու: Նորա փորձերը տեւեցին մօտ 20 տարի, մինչև որ նա բոլոր երկ-

մաութիւններին ու կասկածներին յաղթելով հրապարակ դուրս եկաւ մարդկութեան դատաստանի առաջ:

Պատուաստման ծննդեան օրն է 1791 թուի Մայիսի 14-ը, երբ Ջեննսերը իւր ծննդեան տեղում արաւ առաջին բարեյաջող հրապարակական փորձը մի ութամեայ մանկան վերայ: Հիւթը աւնուեցաւ Սարա Նիլմի կովից ստացած ծաղկից: Սա մի կով կթող աղջիկ էր, որ ցորենի հասկերից կեղեքած ձեռներով կթելով մի ծաղիկ ընկած կով, անդիտութեամբ վարակուել էր նորանից: Երկու ամսից յետոյ նոյն մանկանը փորձի համար պատուաստեցին բուն մարդկային ծաղիկով, որ ամենեւին չը բռնեց, նոյնպէս անյաջող եղաւ և երկրորդ պատուաստումն, այսինքն մանուկը արհեստականապէս կովն ծաղիկը ընդունելով անընդունակ երեւեցաւ բուն մարդկային ծաղկի համար: 1798 թ. Ջեննսերը եկաւ Լոնդոն և ուշադրութիւն զարթեցրեց ինչպէս իւր առաջին գրուածքով, որոյ մէջ ցոյց էր տալիս կովից առած եօթն պատուաստմանց յաջողութիւնը, նոյնպէս և յաջորդ հրապարակական փորձերով: Այդ յայտնագործութիւնը արձականք և հովանաւորութիւն դտաւ: Մի տարիից փոքր ինչ աւելի յետոյ Լոնդոնում արդէն 19,000 անձինք պատրաստուեցան. դոցանից 5000 ին փորձնական պատուաստարանը հրապարակաւ ենթարկեց բուն մարդկային ծաղկին, և նոքա անմատչելի երեւեցան դորա համար:

Այդ նոր դեղից սարսափելի ժանտախտի դէմ առաւել ոգուտ քաղեց մնացեալ Եւրոպան, քան թէ Ջեննսերի հայրենիքը: Արդէն 1801 թ. ցամաքի վերայ վեհնա-

յում հիմնուեցաւ առաջին պատուաստարանը. Գրանսիան, Շվեյցարիան և Իտալիան շուտով հետեւեցին նորան: Բերլինում մի այդպիսի պատուաստարան բաց արին 1802 թ. Գեկտեմբերի 5. Կատերազմները, որոնք նոյն դարու առաջին տասնաբաժնում զըրդեցին և խառնակեցին Եւրոպան, այնչափ եղան կովի ծաղկի պատուաստման ընդհանրանալուն, որ և միայն վերահաս խաղաղութենից յետոյ հաղորդ եղաւ քաղաքական հոգատարութեան:

Աշխարհի միւս մասները ևս պատուաստման տեղեկութիւնը և գործածութիւնը մտաւ անկարծելի արագութեամբ. Հիւսիսային Ամերիկա 1800-ին, իսկ 1802-ին Արևելեան Հնդկաստան, Գրենլանդիա, ձափա կային:

1810 թուից Պրուսիայում (ինչպէս և Ռուսաստանում) կայ պատուաստման կողմնակի ստիպողութիւն: Ոչ ոք օրէնքով հարկադրուած չէ պատուաստուելու, բայց հրապարակական ուսումնարանների սցյելութիւնը և քաղաքական օժանդակութիւնների վայելելը առանց դորա վկայականի անկարելի է: Կառավարութիւնը, չը նայելով նահանգական ժողովների բաղմակողմանի պահանջներին, մինչև այժմ առիթ չը գտաւ ուղղակի ստիպողութեամբ հանել մի այնպիսի բանի, որ բաւական պահանջելու էին ժողովըրդի յօժար կամքը և խելքը: Միայն սաստիկ տարածուած ծաղկի ժամանակ, այն ևս, եթէ առաջարկելը և յիշեցնելը հարկադրական պատուաստման մասին անօդուս մնան, դատարանը իրաւունք ունի սաստիկ հնարների ձեռնարկել: Զօրքի մէջ, ընդհակառակն, կայ անմիջական ստիպողութիւն պատուաստուելու:

Պատուաստումն բուն մարդկային ծաղկից իւր վտանգաւորութեան պատճառով 1835 թ. արգելուած է եռամսեայ բանտարկութեան սպառնալիքով:

Սկզբում բոլոր աշխարհը, ինչպէս նա և ջենները, այն կարծիքն ունէին, որ միանգամուայ պատուաստման պաշտպանողական ոյժը բոլոր կեանքի համար է: Սակայն այս դարու երկրորդ և երրորդ տասնաբաժնում, առաջին պատուաստումներից մօտ 15-20 տարի յետոյ, երբ կրկին երևեցաւ ծաղկը, նորանից բռնուեցան ոչ միայն անպատուաստները, այլ և հասակաւորները, որոնք մանկութեան ժամանակ յաջողութեամբ պատուաստած էին: Սորանից երևեցաւ պարզ, որ սկզբնական յոյսը չափազանց էր: Նոյնպէս այս նկատմունքը արուեցաւ, որ եթէ մի տարեկան հասակում պատուաստած մանուկները 15-20 տարի յետոյ կրկին ենթարկուած էին պատուաստման, սակայնու էր, ուրեմն ծաղկի ընդունակութիւնը դարձեալ դարձած էր: Մի խօսքով համոզուեցան, որ նորա պաշտպանութիւնը չէ տեւում բոլոր կեանքի ընթացքում այլ պահպանվում է միայն մի քանի տարե, և թէ կրկին հարկաւոր է լինում ծաղկի թոյնի ընդունակութիւնը ոչնչացնել մի նոր պատուաստմամբ: Այդ է ծագումն և չափաւոր երկրորդ պատուաստման կամ այնպէս անուանեալ երկրորդ պատուաստման, որ այս դարու 20 թուից սկսած նշանակութիւն ստացաւ իրրև ամենակարևոր լրագործութիւն պատուաստման և 1834-ից հարկադրական եղաւ պրուսական բանակի համար. իւրաքանչիւր զինուոր պատուաստվում է երկու անգամ:

Թէ քանի տարի է տեւում պատուաստման ոյժը, այդ մարդուց է կախուած, առհասարակ 15-20 տարի, այնպէս որ միջին թւով 12-15 տարուայ մէջ պատուաստելը օգտակար է: Մի քանի անձանց մէջ այդ պաշտպանողական ոյժը աւելի վաղ է սպառվում, միւսների մէջ աւելի ուշ: Բայց եթէ երկրորդ պատուաստումն, յիշեալ ժամանակում կատարուելով, չէ կպչում, այն ժամանակ պէտք է երբեմն երբեմն կրկնել, մինչև որ յաջողի, գոնեա միշտ պէտք է անել այդ տիրապետող ծաղիկների ժամանակ:

Երկրորդ Բարեշուշ պատուաստումն, մինչև այժմ որոշ փորձերն նայելով, պաշտպանում է բոլոր կեանքի ընկացողները: Միայն մի քանի անձինք ունին այնպիսի սաստիկ հակումն դէպ ՚ի ծաղիկի թոյնը, որ կրկնակի պատուաստմանից յետոյ ևս ոչնչացրած է լինում առժամանակ միայն: Կան դարձեալ օրինակներ, որ մի քանի անձինք երկու երեք և աւելի անգամ պատուաստուելով, հիւանդանում են բուն մարդկային ծաղիկով: Այդպիսի անձանց համար, մանաւանդ եթէ նոքա բժիշկների և հիւանդապահների նրման ծաղիկ հանողների հետ պէտք է մերձ յարաբերութիւն ունենան, կարող է անհրաժեշտ լինել երրորդ և աւելի պատուաստումն: Բայց դոքա բացառութիւն են: ցաւելով պէտք է նկատել, որ երկրորդ պատուաստման կամ կրկնապատուաստման կարեորութիւնը շատ խոր մտած չէ հասարակութեան մէջ, և թէ հասարակութիւնը դորա միջնորդութեամբ նորից վտանգի մէջ է ընկնում:

Արդեօք պատուաստումն մարդկային և քաղաքակրթուած հասարակութեան մի փառաւոր մոլորութիւն է

թէ փառաւոր զիւտ բոլոր ժամանակների համար և մարդկային հողու մի յաղթանակ ընդդէմ մի թշնամի ուժի: Արդեօք դա ազգերին մի օրհնութիւն է, թէ անէ՞ծք նրկու հայեցուածքներն ևս ունին իւրանց կուսակիցները. պատուաստումն ունեցել է եռանդուն ջատագովներ և անչափ հակառակորդներ, բայց նորա մակաւաթիւ պաշտպանների մէջ ևս երբեմն երբեմն հզօր կասկած է ծագել, և նա նորից ենթարկուել է ամենախիստ փորձերի:

Մի կողմ թողնենք նորա կրած յանդիմանութիւնները և կասկածները, որոնք արժանի չեն հակասութեան. նորան մեկնել են մինչև անգամ իբրև քանդումն Նախախնամութեան օրէնքների, որ ծաղիկով պատժում է մարդկութիւնը ըստ արժանւոյն, նորան ներկել են, ասելով, թէ նա անանայնում է մարդուն: Թողնենք այդ աւելորդ զբոս պարտութիւնները և քննենք գործի արժանաւոր կէտերը: Մենք կրկին ընտրում ենք պատմական ճանապարհը:

Ինչպէս ամէն ստիպողութեամբ յայանուած բան ընդդիմութիւն է գտնում Անգլիայում, նոյնպէս և 1853 թուի պարլամէնտի վճռով հրամայած պատուաստման ստիպողութիւնը այնքան խռովութիւն պատճառեց, որ արդէն 1855 թուին հարցը կառավարութեան այդ իրաւունքի մասին նորից մտաւ ստորին պարլամէնտի առօրեայ գործերի կարգը: Պարլամէնտական վէճերից և հակասական հայեցուածքներից յետոյ, որոնք բարձրացան պատուաստման վերայ, անհրաժեշտ երեւեցաւ այդ գործը մի նոր քննութեան ենթարկել: Պարլամէնտին իւր վճռի համար նիւթ և մի ապահով հիմք տալու համար Անգլիայի բժշկական

զլխաւոր խորհուրդը ձեռք զարկեց այդ գործին, ունենալով մի երջանիկ գաղափար, որ է պատուաստման հարցը միանգամայն հանել ուսումնական աշխարհի հրատարակական դատաստանի առջև: Նա կազմեց չորս հասարակական դատաստանի նշանակութեան և արժանաւորութեան վերաբերեալ զլխաւոր հարցեր, որոնք Անգլիական կառավարութեան միջամտութեամբ առաջարկուեցան Եւրոպայի, Ամերիկայի և Ասիայի նշանաւոր բժիշկներին կարծիքներին և բժշկական ժողովներին: Արովհետեւ բոլոր կառավարութիւնները, որոնց երկիրներում կովից արած պատուաստումն երկար ժամանակ օրէնքով դործ էր դրվում, միասին պաշտպանում էին այս դիտնական հետազոտութիւնը իւրեանց համառօտ կառավարչական հրատարակութիւններով, ուստի և այնպիսի մեծ հիմնովին քննած նիւթ հաւաքուեցաւ, որ կարելի էր պատուաստման վերաբերեալ զլխաւոր կէտերի մասին ապահով կարծիք կազմել:

Առաջին հարցն այս էր. արդեօք պատուաստումն ըստ մեծի մասին պաշտպանում է ծաղկից և տալիս է մի դրեթէ անկախ ապահովութիւն նորա մահաբեր հետեանքների դէմ: 539 բժիշկներից 537, դրական փաստերի վերայ հիմնուած, ստորասական կերպով պատասխանեցին — Գերմանիայի բժշկական շրջանում յայտնի եղած մի յամառ զրուես բացասաբար, և մի Անգլիական բժիշկ մարդկային ծաղկի պատուաստումն առաւել գերազանց համարեց, քան թէ կովից առածը:

Այն թւերը և օրինակները, որոնք կովի ծաղկի պաշտպանողական ոյժը ապացուցանելու համար յառաջ

բերուեցան, մի մեծ գիրք կը կազմեն և անցնում են միլիօններից: Մենք այս տեղ պէտք է բաւականանանք նոցանից հանած այն ակներև իրողութիւնով, որ որչափ մի քանի երկիրների մէջ պատուաստումն ընդունելութիւն է գտել, նոյն չափ և սահմանափակուել է ծաղկի թէ տարածման շրջանը և թէ ոյժը, իսկ երկրազնդի այն կէտերում, ուր նախապաշարմունքը և զիտութիւնը պատուաստման մոտեքին արգելք են եղել, կամ ուր կառավարութեան թուլութիւնը խափանարար է եղել նորա յաջողութեանը, ծաղկիը առաջուպէս կորստաբեր ներգործում է և ժողովրդի մահուան զլխաւոր պատճառներից մինն է կազմում:

Նոյնպէս յայտնի յառաջ է գալիս երկրորդ իրողութիւնը, որ առաւել ձեռնհաս է ստուգելու: Մանկական հասակը սաստիկ ընդունակ է ծաղկի թոյնի համար. այդ այնպէս վճռուած փորձ է, որ հին դարերի բժիշկները նորան համարում էին զլխաւորապէս մանկական հիւանդութիւն, ինչպէս մինչև այժմ էլ համարում են միւս կաշուի վերայ դուրս տուած բաները. կարմրուկը և մոլորուրը: Բայց Եւրոպայում այսօր, երբ սովորութիւն է դարձած մանկաց Եւրոպայում այսօր, երբ սովորութիւն է դարձած մանկանքի կեանքի առաջին ամիսներում պատուաստելը, սահմանվում է ոչ թէ մանկական, այլ առաւել տարեց հասակների ցաւ, այսինքն այնպիսի հասակների, երբ առաջին պատուաստմամբ վերացրած ծաղկաթոյնի ընդունակութիւնները կրկին զարթում են, և թէ նոքա առաջուց ոչնչացրած չեն կրկնապատուաստմամբ:

Այն կարծիքը, թէ պատուաստումն ամէն դիպուա-

ծում չէ պաշտպանում ծաղկից, յառաջացել է նորանից, որ, ինչպէս վերևը յիշեցինք, ոմանք, կամ, լաւ ևս ասել, մի քանի անհասներ այնպէս մեծ հակումն ունին դէպի ծաղկաթոյնը, որ խաբառ չէ ոչնչանում կրկնակի պատուաստմամբ, այո՛, և կրկնակի ծաղկահանութեամբ ևս: Սակայն պէտքէ նկատել, որ պատուաստումն, թէ և այդպիսի անձանց չըպաշտպանէ ծաղկից, գոնեա պաշտպանում է որրա սարսափելի տեսակներից:

Բայց, որ կովածաղիկը կատարած լինի իւր գործը, պէտքէ պատուաստումն օրինաւոր կերպով կատարելագործել, կեանքի առաջին տարիքում յաջողակ պատուաստմանից յետոյ կրկնել այն 10-20 տարեկան հասակում, որպէս զև կրկին զարթած, կամ սովորաբար միայն նուազած ծաղկի ընդունակութիւնը խաբառ ոչնչանայ:

Պրուսական բանակը, կամ այն տէրութիւններինը, որոնց մէջ հարկադրաբար ընդունուած է երկրորդ պատուաստումն, տալիս են անհերքելի ապացոյց նորա օգտակարութեան: Մինչ առաջ ծաղիկը բազմաթիւ մարդոց կենսացութեան պատճառով մի անխուսափելի ախտ էր դարձած զօրքի համար, այժմ նա զինւորների մէջ մի հարուստ բան է և պատահում է համարեա միայն նորեկներին և նոցանից երբեմն մանում է բանակը:

Ճշմարիտ է այժմ ամէն տարի պատուաստում են բազմաթիւ մանուկներ, և վերջին տարիներումս անգամ դարձեալ պատահում է մեզանում ծաղկի: Բայց թող նախն հիւանդագանների վերայ: Ով են նոքա: Սորա են առաջին անպատու այտ կամ վատ պատուաստած մանուկներ,

երկրորդ կանայք, որոնք վաղ, պատանեկութեան հասակում, շատ անգամ ևս թերահատար կերպով, պատուաստած են եղել, և երրորդ այնպիսի մարդիկ, որոնք երբէք զինւոր չը լինելով, մասուկ ժամանակում միանգամ են պատուաստուել: Ուստի և մի սենեակում, ուր, ինչպէս ստատահում է հասարակ ժողովրդի մէջ, շատ անձինք են կենում միասին, և ծաղիկը ներս է մանում, կարելի է դրէ թէ անսխալ որոշել, թէ որոնք ազատ կը մնան նորա վարակմանից, և որոնք կը բռնուին նորանով, և այնպիսի դեպուածներ, որպիսի հետեւեալն է, մեծ ծաղիկների ժամանակ համարեա ամենայն օր նկատվում են, այսինքն, մի ընտանիքի մէջ ամենափոքր չը պատուաստած մանուկը ծանր մահաբեր ծաղիկ է հանում, մի անգամ պատուաստած մայրը պառկած է լինում չափաւոր վարակմամբ, մինչ առաւել հասակաւոր պատուաստած որդիքը և կրկին պատուաստած հայրը անվնաս շջում են ծաղկաթոյնով լրցուած մթնոլորտի մէջ:

Մի անգամ պատուաստումն ևս պատանեկութեան հասակում, առանց կրկնապատուաստման, այսինքն երբ այդ դեղը լրիւ չէ գործ դրած, չէ՞ տալիս արդեօք կատարեալ ապահովութիւն պատահած ծաղկի մահաբեր հետեանքի դէմ: Թէ և հասարակութեան մէջ դեռ ևս չէ արմատացել կրկնապատուաստման դադափարը, բայց այնու ամենայնիւ երկիւղը ծաղկից, որի անունը ընդիս զողում էին հին դարերում, մի աւանդութիւն է դարձել մեզ համար: Մեր այսօրուայ ամենաբազմաթիւ վարակմանքը և տարափոխութիւնքը կազմում են ծաղկի ամենամեղմ ձևե-

ըր, որոնք անցնում են առանց տղեղացնելու և խեղացնելու: Թէհրանում, ուր 1857 թուին միայն սկսուեցաւ պատուաստումն, բժ. Պոլլակը գտաւ, որ բազմաթիւ ճանապարհների վերայ որդրմութիւն խնդրող կոյրերից ինն տասներորդը իւրեանց աչքի լոյսը կորցրել էին նոցա վերայ հանած ծաղկից: Այս սարսափելի իրողութիւնը, որ հին դարերում եւրոպայում մի անձանօթ բան չէր, մեզ այլ ևս չէ վախեցնում:

Լոնդոնի աւողջապահական խորհրդի երկրորդ հարցն այս էր. արդեօք պատուաստեալը, ազատ մնալով ծաղկից, չէ՞ դառնում առաւել ընդունակ տենդի, խուլացաւի և ծիւրախտի համար, և չէ կրում արդեօք մի այլ տեսակի վնաս: Պատուաստման հակառակորդները հաստատում էին, թէ յիշեալ հիւանդութիւնները, պատուաստման սկսելուց յետոյ աարօրինակ կերպով աւելացել են:

Այդ հարցի պատասխանը համարեա՞ նոյնքան մեծ ձայնակցութեամբ եղաւ, որքան և առաջինը: Իսկ այն մեզողրանքը յառաջ էր եկած գլխաւորապէս պատմութեան անտեղեակ լինելուց: Ըշմարիտ է տենդի անուր մեկը աւելի յաճախ ենք գործ դնում, քան թէ հին ժամանակուայ բժիշկները, բայց դորանով չենք կամենում ցոյց տալ, թէ այդ հիւանդութիւնը անհամեմատ աւելի յաճախ է պատահում, այլ մենք միաւորում ենք այդ անուան տակ այդ հիւանդութեան բազմաթիւ տեսակները, որոնց հին բժիշկները զանազան անուններ էին տալիս (լորձիւնքատենդ, նեխահոտ տենդ, նեարդատենդ և այլն):

Իսկ ինչ որ կը վերաբերի խուլացաւին, որին իբրև թէ նպաստել է կովի ծաղկի պատուաստումը, դորա մասին կարելի է անցեալ դարու կիսում, ուրեմն այնպիսի ժամանակ, երբ պատուաստումն չկար, Անգլիայի հռչակաւոր բժշկի՞ Թոմաս Վետի նկատողութիւնը մէջ բերել. նա ասում է, որ բացի ծաղկից և կարմրուկից հազիւ թէ մի հիւանդութիւն աւելի հանրատարած լինի Անգլիայում, քան թէ խուլացաւը:

Տենդը, խուլացաւը և ծիւրախտը այնպիսի հասարակական երևոյթներ են, որոնք ըստ մեծի մասին կախուած են հասարակութեան դրութենից և միշտ նորա հետ բաւական հաւասար քայլերով են ընթանում: Այդ չարիքի այժմեան հասարակութեան մէջ բռնած բազմաձիւղ արմատները չեն կերակրվում կովի ծաղկով, այլ նորա բուն աղբիւրներն են մեծ քաղաքների բնակութեան միշտ աւելանալը և խտանալը, գործարանների թուփ աճումն, մարդոց գործերի խառնակուիլը, կենսական պիտոյքի հոգալու գծուարութեան մեծանալը և այլ անթիւ սորա հետ կապուած վատ կողմերը յառաջ խաղացող քաղաքակրթութեան:

Երրորդ հարցն այս էր. արդեօք կովածաղկի թարախով կարող են տարաժողութիւ մի քանի այլ հիւանդութիւններ, դորօրինակ խուլացաւը, և թէ զարգացած բրժիշկը կարո՞ղ է, սխալմամբ, մի մանկան բազկից ծաղկահիւթի փոխանակ մի այլ ցափի հիւթ առնել և յետոյ սորանով պատուաստել: Վերջինս անկարելի է բուն կովածաղկի ճանաչելը չէ պահանջում առանձին դիտնական զարգացումն:

Խուլացաւ չէ կարող պատուաստուել, որովհետեւ նա ընդհանրապէս վարակուող չէ, այլ աննդիւն և ներքին դործարաններին խանգարումն է նորա քակղենապատճառք: Որքան մնում են միայն վարակուող հիւանդութիւնները: Սոցանից մի քանիսը արեւան կամ թարախի միջնորդութեամբ կարող են ուղղակի տարափոխուել մի անձնաւորութիւնից դէպի միւսը. բայց կովե ծաղիկը չունի նոցա հետ մի առանձին կապ. նա այդ հիւանդութիւնների մէջ ընկած մանուկներին նոյնպէս է կաշում, ինչպէս և առողջներին, և չունի մի առանձին յաւկութիւն, որով ցոյց տար, թէ ինչ մարմնուց է վեր առած: Մի մանուկ, որ պատուաստելու և ծաղիկը առնելու ժամանակ արտաքուստ առողջ է երևում և լաւ ծաղիկներ է ունենում, կարող է այնու ամենայնիւ վարակուած լինել մի տարափոխիկ հիւանդութեամբ: Մինչև անգամ պատուաստը և բուն մարդկային ծաղիկը կարող են հաւասարաբայլ ընթանալ մի և նոյն մարմնոյ մէջ: Որքան այսուհետև պարզ հասկանալի է, թէ որ և իցէ հիւանդութիւն ունեցող մանկանից կովածաղիկի հետ միասին չէ կարող պատուաստուել և նորա ունեցած միւս հիւանդութիւնը:

Այդ ճշմարտութիւնը իրազործվում է փորձով, եթէ միայն փորձը կատարուի ճշմարտութեամբ: Եստ բրժիշկներ առել են ծաղկահիւթ յայտնի վարակացու ունեցող մանուկներից և պատուաստել են սորանով այլ մանուկներ, առաջուց թոյլատրութիւն ստանալով սոցա ծրնողներից. մանուկները մնացել են բոլորովն առողջ: Ընը-

մարիտ է, լինում են, թէ և շատ սակաւ, և այնպիսի դիպուածներ, ուր ծաղիկի թարախի հետ փոխադրվում են և այլ ցաւերի հիւթեր, բայց այդպիսի միջոցներում յանցաւոր է իսկապէս բժիշկը, որ չէ վեր առել, ինչպէս հարկն է, մաքուր կովածաղիկի թարախը, այլ կուպիտ և աններելի տգիտութեամբ, կամ անհոգութեամբ, տուել է պատուաստողին, փոխանակ ծաղիկի թարախի մի այլ ցաւի հիւթ. նա պատուաստել է այն վարակացաւը և ոչ թէ կովածաղիկը:

Չորրորդ կամ վերջին հարցը պարագլում էր նորանով, թէ երբ պէտք է կատարուի առաջին պատուաստումը: Ամենափոքր հասակը անտարափոյս կը համարուէր և ամեն պարմար ժամանակը, եթէ մանուկների հիւանդութիւնները հակառակ առիթ չը տային: Կրթարաններում ծծկերները պատուաստվում են կեանքի առաջին օրը, որովհետև մի այնպիսի բազմութիւն չը պատուաստածների երկար չէ կարող ծաղիկ հանելուց անվտանգ մնալ:

Որքան պատուաստման հարցը այսօր չէ հիմնուած փոքրաթիւ կարծիքների կամ աղքատիկ և անհաստատ տեղեկութիւնների վերայ: Ոչ, կովածաղիկի պատուաստման արժանաւորութեան մասին գիտութիւնը վկայել է շատ բաների մէջ չը տեսնուած ու չը լուած ձայնակցութեամբ, և անհամար փորձերը ամէն օր անխարդախ ձայն են բարձրացնում նորա համար: Մեր այժմեան ծաղկացաւը, փոխանակ պատուաստման դէմ լինելու, ուղղակի խօսում է յօգուտ նորա:

Բայց հատարակութիւնը, մտքից հանելով ծաղիկի

երկիւղը, սառնասիրտ է դարձել դէպ 'ի նա, հրապարակական խմբովին պատուաստմունքը ամենեւին բաւականութիւն չեն տալիս այն պահանջներին, որ արդարացի իրաւունքով պահանջում են զխտութիւնը և պատուաստման ընկերութիւնները, հաստատուն հրապարակական պատուաստարանների թիւը (երեք հատ բոլոր Պրուսական թագաւորութեան մէջ), որոնք բացի իւրեանց դորձնական նշանակութիւնից լուծում են և այլ ամենակարևոր ուսումնական ինդիւսեր, շատ փոքր է նոցա կարևաց համեմատ և երկրորդ պատուաստման անհրաժեշտութիւնը շատ սակաւներն են ըմբռնել:

Իսկ երբ հասարակութիւնը կատարած կը լինի պատուաստման և կրկնապատուաստման առաջին քայլը, երբ իւրաքանչիւր մարդ բժշկից այնպէս կը պահանջէ այդ գեղը նորան ապագայում սպառնացող ծաղիկի դէմ, ինչպէս խնդրում է նորա օգնութիւնը վերահաս հիւանդութեան մէջ, այն ժամանակ ծաղիկը կը մանէ պատմական հիւանդութիւնների կարգը, այսինքն այնպիսի հիւանդութիւնների, որոնք թէպէտ եղել են մի ժամանակ, բայց այժմ չը կան ամենեւին:

Ինչքան կարողացել է որոշել զխտութիւնը, ծաղիկի հետքն ու մահը մարդիկուեան յետքին է:

ՅԱՒԵԼՈՒԱԾ:

ՊԱՏՈՒԱՍՏՄԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Մեր զիւղերումը կան պատուաստողներ, որոնք կատարում են այդ իւրեանց հասած աւանդութիւնների համեմատ: Մենք աւելորդ չենք համարում այս տեղ դարձնել նոցա ուշադրութիւնը մի քանի կարևոր կէտերի վերայ, որոնք կարելի է և մասամբ յայտնի են նոցա:

1. **Մաշկակներ:** Ձենները իւր զիւտից յետոյ ուղարկեց կովածաղկի թարսիւր թերերի վերայ չորացրած եւրոպայի մայրաքաղաքների մեծ մասը (Վեննա, Բեռլին և այլն) և ամենայն տեղ, ուր որ պահանջում էին: Այդ հիւթով պատուաստեցին մարդիկ և հիւթը այնուհետև սկսան առնել պատուաստածներից: Երկար ժամանակ դեռ ևս թագաւորում էր այն կարծիքը, թէ թարսիւր անցնելով բազմաթիւ մարմինների միջով, նուազեցնում է իւր պաշտպանողական ոյժը, այս պատճառով և աշխատում էին շուտ շուտ նորոգել այն կովի ծաղկահիւթով: Պրուսիայում մինչև այժմ էլ նշանակած է մի գումար (թէ և չնչին) այն մարդուն, որ կը նկատէր կովի վերայ ծաղիկ և իւր ժամանակին կը յայտներ կառավարութեանը: Այդ կարծիքը այժմ հերքուած է. կովից նոր ստացած ծաղկահիւթը չունի մի առանձին գերազանցութիւն, ընդհակառակը, նա մի քանի բանով աւելի ստոր է, օրինակի համար չունի այն մեղմ բնաւորութիւնը, որ ստանում է մի-

այն մի քանի մարմիններ անցնելուց յետոյ, հարկաւոր է միայն զգուշութեամբ վեր առնել նորան և լաւ պահել:

Նիւթի վեր առնելու լաւ ժամանակն այն է, երբ պատուաստմանից յետոյ անցնում է 7-8 օր, կռան ծաղիկը հասնում է իւր ամենամեծ բարձրութեանը և միջի հեղանիւթը լինում է պարզ ջրի նման, իսկ եթէ աւելի անց կինայ, անօգուտ կը լինի, որովհետեւ չի կաշիս Ստանալուց յետոյ նորան պէտք է դնել երկու ապակեայ տախտակների մէջ պինդ սեղմել սոցա, ափերը փակել զմուռով կամ ձիւթով և փաթաթելուց յետոյ դնել ածխի փշրանքով լցրած արկղի մէջ. այդ կը պահպանէ տաքութեան միակերպութիւնը: Նիւթ հարկաւոր է հեռու տեղ ուղարկել ծաղկահիւթը, կարելի է նորան ածել մազի նրման բարակ ապակեայ խողովակի մէջ, որի ծայրը, կրակի վերայ բռնելով, ինքն իրան փակվում է: Այնուհետեւ հարկաւոր են մի և նոյն զգուշութիւնները, ինչ որ սուսալ: Առ հասարակ կռնից կուր պատուաստելու աւելի ապահով է:

Ժամանակը: Առ հասարակ որքան վաղ կտրուի ծաղիկը այնքան օգտակար է, մանաւանդ, որ մանկական հասակը մի առանձին հակումն ունի դէպ 'ի այդ: Բայց լաւ է սպասել, որ մանկան ծննդից զոնեա երեք ամիս անցնի, իսկ եթէ երկրի մէջ տարածուած ծաղիկ կայ, կարելի է և ծննդեան առաջին օրը: Ցաւելով պէտք է նկատել, որ շատ անձինք (մինչև անգամ բժիշկներ) ունեցել են այն կարծիքը, թէ ստրածուած ծաղիկի ժամանակ վնասաւոր է, պատուաստելու և ո՞վ գիտէ, ո՞րքան անձինք

են ուղարկուել դորանով դէպ 'ի գերեզման, մինչ նոքա, կարելի է, մի արագ պատուաստմամբ ազատ կը մնային մահից: Պատուաստը ամենեւին այն չէ ծաղիկի համար, ինչ որ երկաթը կայծակի. նա ամենեւին չէ աւելացնում մարդու ծաղիկ հանելու ընդունակութիւնը: Բայց եթէ պատահել է, որ պատուաստմանից մի քանի օր յետոյ ծաղիկ է հանել մանուկը, դրա պատճառը ոչ թէ պատուաստն է եղել, այլ այն, որ սորա պաշտպանողական օյժը սկսում է միայն 8-10 օր անցնելուց յետոյ:

Տարուայ եղանակը մի առանձին նշանակութիւն չունի: Չմեռուայ կտրած ծաղիկը, եթէ միայն լաւ կպել է, ոչինչ զանազանութիւն չունի ամառուայ կտրածից, բայց գարունը և ամառը նախապատուելի են միայն այն պատճառով, որ այդ ժամանակ աւելի հեշտ է ցրտից պահպանելը, քան թէ ձմեռը, մանաւանդ մեծ քաղաքներում, ուր մեծ գրուշութիւն է հարկաւոր ծծկերներին հասարակաց պատուաստարանը տանելու և յետ բերելու համար:

Պատուաստման փեղը ընդհանրապէս լինում է ուսագլուխը, ուր հարկաւոր է կտրել ծաղիկը զոնեա երեք տեղ մի վերջով միմեանցից հեռու, որպէս զի հասունացած ժամանակը նոքա չը միանան:

Այս բոլորը, ինչպէս հարկն է, կատարելուց յետոյ պատուաստողը հեռանում է: Նա պէտք է դարձեալ զայ 7-8 օրից յետոյ, որպէս զի, եթէ իւր պատուաստած ծաղիկը կպել է, թարախ վեր առնէ, իսկ եթէ ոչ՝ կրկին փորձէ: Մինչև այդ ժամանակը հոգար մնում է ծնողների կամ հոգատարների վզին: Նոքա պէտք է աշխատեն, որ սենեակը

ոչ շատ շք լինի և ոչ շատ ցուրտ, չը պէտք է նստացնեն
մանկանը բաց պատուհանի կամ վառած հնոցի մօտ.
պէտք է կերակրեն միմեայն մօր կաթով: Մանաւանդ
զգոյշ պէտք է վարուին պատուաստած կռան հետ, որպէս
զն ծաղիկը չը ջարդուի կամ երեսի կաշին չը պոկուի: Ու
րովհետև պատուաստած անզերի տաքութիւնը սովորա-
կանից աւելանում է, ուստի և սաստիկ քոր են գալիս նո-
քա, սակայն չը պէտք է թոյլ տան քորելու: Որքան ծա-
ղիկը չորացած էլ լինի, այնու ամենայնիւ պէտք է սպա-
սել, որ նա ինքն իրան վայր ընկնի: Իսկ որ զլեւաւորն է,
պատուաստածի կտակէքը, սենեակը, սորա օդը և առ հա-
սարակ ամէն բան նորա շուրջը պէտք է շատ մաքուր լինի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0248457

Գրքն է 20 կողմի արժամք.

